տէրն է Պ. Ա. Սագաեան: Պ. Մ. Շամտանճեան որ ընդ մէջ լուրջ խմբագրականներ կը հրատարակէ: Արտասահմանի համար տարեկան բաժնեգինն է 22 ֆր.: «Բազմավէպ»ի խմբագրութիւնը յաջողութիւն կը մաղթէ վերածնեալ «Ծաղիկ»ին:

119. Բագուցի Մէլիքեան և Արամեան հարուստ ազգայինք իրենց հաշուով Էջմիածնայ նոր վեհարան մը պիտի շինեն:

120. «Բիւզանդիոն» լրագրի մէջ Պ. Եր. Տէր Անդրէասեան ընդարձակ շարք մը յօդուածներով յօբելեար Ռ. Պէրպէրեանի կենսագրութիւնը հրատարակեց լուրջ ուսումնասիրութեամբ:

121. Փեթերպուրկի մէջ ազգային ծերանոց մը շինուեր է:

122. Փարիզու ազգային եկեղեցւոյ շինութիւնը գարնան պիտի սկսի, Կարնէի և Ս. Պէզիրճեան ճարտարապետներու առաջնորդութեամբ:

123. Պոլսոյ ազգ. հիւանդանոցին՝ Յ. Նփուլպէնկեան 400 ոսկի նուիրեր է:

124. Թուրքիոյ Վեհապետը Դ. կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհեր է Պ. Ռ. Պէրպէրեանի:

125. Էջմիածնայ նոր տպարանի շինութեան համար Տ. Սուքիաս Արքեպիսկ. Պարզեանց 400 րուպլի նուիրեր է:

126. Կարնոյ երկրաշարժէն արկածելոց օգնելու համար, Պոլսոյ ազգայինք 1200 ոսկի հանգանակեր են:

127. Խշխանուհի Ծրամելիք Լազարեան Մոսկուայի մէջ իր հաշուով կանգնած մէկ միլիոն արժողութեամբ ապարանք մը, տեղւոյն ազգային եկեղեցւոյ նուիրեր է. շէնքէն գոյացած հասոյթով նուիրատուին անուամբ Լազարեան ճեմարանի մէջ հայ աղքատ տղաքներ պիտի պահուին:

128. «Թան» լրագրի համեմատ 6000 ազգային Մշեցիներ ուսուցանութեան համար ռուս հիւպատոսին դիմեր են:

129. Առաջիկայ Յունուարին՝ «Արաքսիս» ընտանեկան և գրական ամսաթերթը Գահիրէի մէջ լոյս կը տեսնէ:

130. Կիլիկիոյ կաթող. ընտրութեան ժողովքը կատարուեր է: Ս. Եպիսկ. Խապայեան ընդուներ է 30 քուէ, Գ. Եպիսկ. Երէցեան 48 Վահ. Ե. Մանկունի 43. Հմայեակ Ե. Դիմաքսեան 44. Գրիգորիս Ե. Յովհաննէսեան 30. Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան 28: — Վերջին քարձրատիճան եկեղեցականը յետ ընտրութեան հրաժարական տուեր է:

131. Կ. Պոլսոյ մէջ Արտօնատէր–խմբագրապետ Պ. Արմէն Լուսինեանի աշխատութեամբ «Հանրագիտակ» անուամբ թերթը վերսկսած է լոյս տեսնել մանկավարժական, գիտական, արուեստական բովանդակութեամբ: Յաջողութիւն:

# ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ Մրմունջ Հայկական. Բ. տպագր. Վանա տպ. «Իրաւունք» լրագրոյ 1901. Գին 1 ֆր.:

ՏԵՂԵԿԱԳԻՐ Հարիւրամեայ յոբելեանի Ս. Լուսաւ. ազգ. հիւանդանոցին Զմիւռնիոյ (1801–1901). տպ. Մամուրեան. 1901. Գին ?

ՄԿԱ ՎԱԽ ՉՈՒՆԻՄ. Գրեց Գիւլասեանցի. Փարիզ տպ. Պ. Միսաք. 1901. Գին 50 սանտ.:

ՌՈՒՍՑ Ա. Բէյլոս–Բէկեան. Փարիզ. տպ. Պ. Միսաք. 1901. Գին 1 ֆր.:

ԳԵՂՕ կոմեդիա երեք արարուածով (երկրդ. տպ. ուղղած) գրեց Գ. Սունդուկեանց. Թիֆլիս. տպ. Մն. Մարտիրոսեանցի. 1901. Գին 50 կոպ.:

ՏԵՂԵԿԱԳԻՐ Հայ ընթերցարան Զմիւռնիոյ (1900 Յունվ. 1. դեկտ. 31): Զմիւռնիա տպ. Կ. Թագիկեան. 1901. Գին ?

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ 200ամեայ յոբելեանի առիթով գրեց Ահարոնեան. Թիֆլիս տպ. Մ. Մարտիրոսեանցի 1901. Գին 5 կոպ.:

ԿՏԱԿ գրական–բանասիրական ժողովածու Գ. Ջանշեանի յիշատակին, խմբագրեց Վ. Փափազեան Թիֆլիս. տպ. Կ. Մարտիրոսեանցի. 1901. Գին 2 րուբ.:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ առասպելները Մ. Խորենացի Հայոց Պատմութեան մէջ. արտատպուած «Արարատ» ամսագրէն: Վաղարշապատ. տպ. Ս. Էջմիածնի. 1901. Գինն է 1 րբլ. 50 կոպ.:

# † ՄԱՀԱԶԴ

Սեպտեմբեր 16 (Հ. Տ.). — Վախճանեցաւ Թիֆլիսի քաղաքագլուխ Գէորգ Եւանգուլեան: Շարք մը յօդուածներով իբրեւ «Մեղու»ական կռուեր է ազատամիտ «Մշակ»ի դէմ: Եւ Արծրունիի բերրն ալ ըստ իր ուղղութեան խորհրդատար դիմագրեր է անոր եւ ներկայ նոյն «Մշակ»ը իր այդ հակառակորդին համար կ'ըսէ՝ «մեր հակառակորդներէ մէկ ալ քիչ ընկնող այժ էր, Մեղուական կուսակցութեան սիւներից մէկը»: Մենք ինչ որ լսեր ենք, հանգուցեալ Գ. Եւանգուլեան իր պաշտօնին մէջ շատ սիրելի ու համակրելի անձ մ'եղած է:

Հոկտեմբեր 28 (Ն. Տ.). — Կ. Պոլսոյ մէջ վախճանեցաւ Յարութիւն փաշա Տատեան. Հանգուցեալը՝ Օսմանեան տէրութեան կարեւոր եւ օգտակար եղած է: Իր դիւանագիտական ծառայութեան եւ արգեանց համար, ի բաց առեալ Անգղիան միայն՝ ամէն տէրութեանց պատուանշաններու արժանացեր է:

Նոյեմբեր 17 (Հ. Տ.) վախճանեցաւ ի Կ. Պոլսոյ մէջ Սոփիան փաշա Ասլանեան. Պետական եւ Պատրիարքական նշանաւոր անձ, նախկին ուսուցիչ կայս. բժշկ. համալսարանի:


digitised by A.R.A.R.@

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1902 ԹՈՒԱԿԱՆԻ

# ՄՇԱԿ

(30–ՐԴ ՏԱՐԻ)

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿ»Ը ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԱՄԵՆ ՕՐ ԲԱՑԻ ՏՕՆԵՐԻՆ ՅԱՋՈՐԴՈՂ ՕՐԵՐԻՑ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ․ «Մշակ»ի տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր․, ինն և ութ ամսվանը՝ 8 ր․, եօթ ամսվանը՝ 7 ր․, վեց ամսվանը՝ 6 ր․, հինգ ամսվանը՝ 5 ր․, չորս ամսվանը՝ 4 ր․, երեք ամսվանը՝ 3 ր․, երկու ամսվանը՝ 2 ր․, և մի ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ․ Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար․ Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ․ Պարսկաստանի բաժանորդը 10 րբլ․։

«ՄՇԱԿ»ին գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»ին գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով․ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1․ Լոյս տեսաւ «ԳԵՂՈՒՆԻ» Պատկերազարդ Հայաթերթը, զոր կը ստանան միայն այն թերթերը՝ որոնք կը բարեհաճին տպել անոր բովանդակութիւնը․ և միայն այն բաժանորդները կը ստանան, որոնք ԿԱՆԽԻԿ կը յղեն բաժնեգինն որ է 3 ֆրանք․ իսկ «ԲԱԶՄԱՎԷՊ»ի բաժանորդաց համար ձրի է, միայն ստանալու համար 1 ֆրանք ճանապարհի ծախս պէտք են յղել։

2․ Դիտել կու տանք Կ․ Պոլսոյ այն մի քանի պատուական թերթերու խմբագրաց, որ նոր տարիէն սկսեալ՝ մեր թերթերը ստանալէ կը դադրին, եթէ իրենց թերթերը չի յղեն ՈՒՂՂԱԿԻ խմբագրութեանս։

3․ «ԳԵՂՈՒՆԻ»ի հրատարակութեան ամբողջ նիւթական ծախսերը «ԲԱԶՄԱՎԷՊ»ի խմբագրութեան վրայ ըլլալով, նոր տարիէն՝ մեր թերթը ձրի ոչ ոքի չենք կարող յղել։

ԽՄԲ․ «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի